Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2022.

«Վանաձոր բժշկական կենտրոնի «Հիստոպաթոլոգիայի լաբորատորիայի» արդիակացման» դրամաշնորհային ծրագրի ստորագրման արարողություն

2022 թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ առողջապահության նախարարությունում տեղի ունեցավ «Վանաձոր բժշկական կենտրոնի «Հիստոպաթոլոգիայի լաբորատորիայի» արդիակացման» 81,327 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Ճապոնիայի կառավարության Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիմայի և Ազնավուր հիմնադրամի գործադիր տնօրեն տիկին Քրիստինա Սարկիսյանի միջև: Արարողությանը ներկա էին առողջապահության նախարար տիկին Անահիտ Ավանեսյանը, Լոռու փոխմարզպետ պարոն Հովհաննես Ավետիսյանը և Վանաձոր բժշկական կենտրոնի տնօրեն պարոն Վահագն Մկրտչյանը:

Ծրագրի նպատակն է բարձրացնել ախտաբանական հետազոտության որակը և բարելավել Լոռու մարզի և հարակից այլ մարզերի բժշկական ծառայությունների մակարդակը՝ Վանաձորի բժշկական կենտրոնին անհրաժեշտ բժշկական սարքավորումներ տրամադրելու միջոցով: Արդյունքում տարեկան մոտ 5000 մարդ կշահի ծրագրից:

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Տիկին Սարկիսյանի ելույթը

Դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը նախարար Ավանեսյանի ներկայությամբ

Դեսպան Ֆուկուշիման, նախարար Ավանեսյանը, բժիշկ Մկրտչյանը և տիկին Սարկիսյանը